ԿԱՐԾԻՔ

Վարդիթեր Ջանիբեկի Մկրտչյանի «Անհատական սկզբունքի իրականացման դժվարություններն ու դրանց հաղթահարման ուղիները տարրական դպրոցում» խորագրով ԺԳ.00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցմանը ներկայացվող ատենախոսության վերաբերյալ

Յուրաքանչյուր մարդ յուրովի է: Այդ իսկ պատճառով էլ ուսումնադաստիարակչական գործընթացում կարևորվում է անհատական մոտեցման սկզբունքը: Անհնար է արդյունավետ կազմակերպել կրթական գործընթացը, բացահայտել սովորողի մտավոր և ստեղծագործական ներուժը, եթե անտեսվում են նրա անհատական առանձնահատկությունները: Չէ որ նույնիսկ ջրի կաթիլների պես միմյանց նման երկվորյակներն ունեն բոլորովին տարբեր բնավորություններ, ընդունակություններ և խառնվածք:

Վարդիթեր Ջանիբեկի Մկրտչյանի թեկնածուական թեզը նվիրված է մանկավարժության տեսության և պատմության արդի, տեսագործնական կարևոր նշանակություն ունեցող հիմնահարցերից մեկին, այն է՝ անհատական սկզբունքի իրականացման դժվարությունների վերհանմանն ու դրանց հաղթահարման ուղիների բացահայտմանը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, գրականության ցանկից, հավելվածից, ներառում է աղյուսակներ, տրամագրեր, նկարներ:

Ներածությունում հիմնավորված է ատենախոսության արդիականությունը, հստակ ձևակերպված են օբյեկտը, առարկան, նպատակը, վարկածը, առաջադրված խնդիրները, ներկայացված են հետազոտության մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթը, տեսագործնական նշանակությունը, պաշտպանությանը ներկայացվող դրույթները:

Իր գիտական աշխատանքում ատենախոսն առաջադրել է ուսումնական սկզբունքների նոր դասակարգում, նորովի է մեկնաբանել «անհատական ուսուցման սկզբունք», «ուսուցման անհատականացում» հասկացությունները, բացահայտել է անհատական մոտեցման սկզբունքի իրականացման հիմնական դժվարությունները, մշակել է նշված սկզբունքի արդյունավետ կիրառման մոդել: Նշվածով է պայմանավորված ատենախոսության գիտական նորույթը:

Վարդիթեր Սկրտչյանի նորովի անդրադարձը ուսուցման անհատականացման հիմնահարցին, առաջադրված տեսական դրույթները, դիդակտիկական նոր ուղիները, անհատական մոտեցման սկզբունքի իրականացման մոդելը հարստացնում եմ մանկավարժական միտքը և նաստում կրթական հաստատություններում իրականացվող ուսումնադաստիարակչական գործունեության արդյունավետության բարձրացմանը: Նշվածով է պայմանավորված ատենախոսության տեսական և գործնական նշանակություն

Հեղինակը սեղմագրում և իր զեկույցում ներկայացրել է ատենախոսության կառուցվածքը և համառոտ բովանդակությունը: Թույլ տվեք չկրկնվել և անդրադարձ կատարել ատենախոսության ուժեղ կողմերին և առավել արժեքավոր ասպեկտներին:

- Հստակեցվել և մեկնաբանվել են «ուսուցման սկզբունք», «տարբերակված ուսուցում» հասկացությունները, նորովի են սահմանել «անհատական մոտեցման սկզբունք» և «ուսուցման անհատականացում» հասկացությունները:

- Առաջադրվել է տեսականորեն հիմնավորված ուսուցման սկբունքների նոր դասակարգում, որի համաձայն սկզբունքները լինում են՝ համընդհանուր, համակարգային կամ համակարգաստեղծ:

- Նշվածով պայմանավորված՝ բոլոր դիդակտիկ սկզբունքները դիտարկվել են անհատական մոտեցման սկզբունքի պրիզմայով, ինչը ենթադրում է ուսուցման մյուս սկզբունքների անհատականացված իրականացում:

- Կարևորվել է անհատականացված ուսուցման սկզբունքի անմիջական կապը տարբերակված ուսուցման և ներառական կրթության հետ: Նշենք, որ ատենախոսը ունի այդ թեմային նվիրված հրապարակումներ:

- Առանձնացվել է անհատական մոտեցման սկզբունքի իրականացման երեք տարբերակ՝ ըստ նշված սկզբունքն իրականացնող սուբյեկտի: 1-ին տարբերակ՝ անհատական մոտեցման սկզբունքի ոչ նպատակաուղղված իրականացում (սուբյեկտը բացակայում է): Թույլ տվեք նշել, որ այս տարբերակը, ցավոք, դպրոցական առօրյայում առավել հաճախ հանդիպողն է: 2 տարբերակ՝ անհատական մոտեցման սկզբունքի մասնակի իրականացում, քանի որ միակ սուբյեկտն ուսուցիչն է: Եվ 3-րդ տարբերակը՝ անհատական մոտեցման սկզբունքի լիարժեք իրականացում, քանի որ սուբյեկտը ոչ միայն ուսուցիչն է, այլև սովորողները:

- Երրորդ տարբերակի իրականացման հետ կապված հարկ է նշել հետազոտության բազաներից մեկը՝ Սպարտակ Մկրտչյանի անվան «Բյուրակն» կրթահամալիրը, որտեղ ամեն մի սովորող բոլոր առարկաները յուրացնում է իր անհատական ծրագրով, քանի որ դպրոցի պարտքն է պահպանել ու զարգացնել երեխայի անհատականությունը:

- Ատենախոսը կարևորել է անհատական մոտեցման սկզբունքի իրականացումը ոչ դաս-դասարանային պայմաններում:

- Ներկայացվել է անհատական մոտեցման սկզբունքի իրականացման դժվարությունների հաղթահարմանն ուղղված ուսուցման գործընթացի կազմակերպման արդյունավետ մոդել: Առանձնացվել են ուսումնական գործընթացի կազմակերպման երեք փուլեր՝ հայտորոշիչ, հիմնական, ավարտական: Հայտորոշիչ փուլի արդյունքների հիման վրա կազմվում է տվյալ աշակերտի անհատական ուսումնական պլանը: Հիմնական՝ ուսուցման փուլի ընթացքում կիրառվում են ուսումնական գործընթացի անհատական, զույգային, խմբային և կոլեկտիվ ձևերը: Դրանցից առաջատարը, ըստ ատենախոսի, կոլեկտիվ ձևն է՝ աշխատանք փոփոխական կազմ ունեցող զույգերով: Ավարտական (քննական) փուլում իրականացվում է ուսումնական ծրագրի արդյունքների ամփոփում: Նշենք, որ մեկ փուլից անցումը մյուսին յուրաքանչյուր սովորողի համար տեղի է ունենում տարբեր ժամանակահատվածներում և տարբեր ձևերով:

Ատենախոսությունն ամբողջական, ավարտուն և արդիական հնչեղություն ունեցող հետազոտություն է: Այն գրված է գիտական պատշաճ մակարդակով:

Եզրակացությունները տրամաբանորեն բխում են կատարած հետազոտության և ատենախոսության հիմնական դրույթներից, որոնք արտացոլված եմ նաև ատենախոսի հրապարակումներում:

Նշվածի կողքին հարկ ենք համարում նշել որոշ թերություններ.

1. Հետազոտությունը ընդգրկում է 99 սկզբնաղբյուր, որոնցից ընդամենը 15-ն են (մոտավորապես 15%) հրատարկվել վերջին հինգ-վեց տարիների ընթացքում:

2. Ատենախոսության 100-րդ էջում նշվում է, որ առաջարկվող մոդելի կիրառումը թույլ է տալիս խուսափել աշակերտների շրջանում դրսևորվող այնպիսի երևույթներից, ինչպիսիք են թերարժեքության կամ գերարժեքության բարդույթը, էգոցենտրիկ մտածողությունը, մրցակցությունը և այլն: Ցանկալի կլիներ, որ ատենախոսի այդ պնդումը հաստատված լիներ ոչ միայն դիտման մեթոդի միջոցով, այլ նաև այլ հոգեբանամանկավարժական գիտական մեթոդների կիրառման արդյունքում:

3. Շահեկան կլիներ, եթե հետազոտության ընթացքում անհատական սկզբունքի իրականացման վերհանված դժվարությունները ամփոփ ներկայացված լինեին առանձին աղյուսակում:

4. Ցանկալի կլիներ, որպեսզի ատենախոսն ավելի հանգամանորեն ներկայացներ ուսումնական գործընթացում գործածվող հիմնական մեթոդիկաները, օրինակ՝ Ա. Գ. Ռիվինի մեթոդիկաները և այլ, ավելի ժամանակակից, մեթոդիկաներ:

5. Խորհուրդ կտանք ատենախոսին վերանայել և լրամշակել իր կողմից առաջադրված մոդելի կառուցվածքային առանձնահատկությունները ներկայացնող գծապատկերը, քանի որ նշված մոդելը բովանդակային և կառուցվածքային առումներով շատ ավելի հարուստ է և խորքային: Այդ մասին են վկայում ատենախոսության տեքստը և հիմնախնդրին վերաբերող հրապարակումները:

6. Ատենապոսությունում առկա են խնբագրական թերություններ, վրիպակներ: Աղյուսակները, տրամագրերը, նկարները վերնագրված չեն:

Ատենախոսության ներածությունում նշված չէ ատենախոսության բնագրում պարունակվող գծապատկերների, տրամագրերի, նկարների, հավելվածների քանակը:

Մեր կողմից արված դիտողություններն բոլորովին չեն նվազեցնում ատենախոսության գիտական արժեքը: Այն ավարտուն, ինքնուրույն հետազոտական աշխատանք է: Ցանկալի է, որպեսզի հետագա գիտագործնական աշխատանքում ատենախոսը իր կողմից մշակված անհատական մոտեցման սկզբունքի հիման վրա կազմակերպող և իրականացվող ուսումնական գործընթացի մոդելը տարածի ուսուցիչների շրջանում՝ նպաստելով մանկավարժական մտքի հետագա զարգացմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վարդիթեր Ջանիբեկի Մկրտչյանի «Անհատական սկզբունքի իրականացման դժվարություններն ու դրանց հաղթահարման ուղիները տարրական դպրոցում խորագրով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանավորման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, ԲՈԿ-ի կողմից ԺԳ.00.01. «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է հայցած գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս
մանկավարժական գիտությունների դոկտոր, դոցենտ Ժ. Հ. Պայլոզյան

Ժ.Հ. Պայլոզյանի ստորագրությունը հաստատում եմ:
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի գիտական քարտուղար,
մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Մ. Մ. Իսպիրյան

12. 10. 2022 թ.